

«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հավելված 1

«Վանաձորի Հ.Թումանյանի անվան

պետական համալսարան» ՊՈԱԿ-ի

ռեկտորի 28.12.2015 թ. թիվ 1034 Լ/Կ հրամանի

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ (ՀԱՐԱՏԵՎ) ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

Ընդունված է ՎՊՀ-ի գիտխորհրդի կողմից

Արձանագրություն թիվ 9 24.12.2015թ.

Վանաձոր

2015թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

1.1 «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» ՊՈԱԿ-ում (այսուհետ՝ Համալսարան) Շարունակական (հարատև) կրթության կազմակերպան իրավական հիմքերն են «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները, ՀՀ կառավարության 2009թ. հոկտեմբերի 15-ի նիստի թիվ 43 արձանագրային որոշմամբ հավանության տրված «Հայաստանի Հանրապետությունում ցկյանս ուսումնառության հայեցակարգը», Համալսարանի Շարունակական կրթության կազմակերպման ռազմավարությունը, Համալսարանի կանոնադրությունը և Շարունակական (հարատև) կրթության կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) կանոնակարգը:

1.2 Շարունակական (հարատև) կրթության կազմակերպան նպատակներն են՝

ա. աշխատաշուկայի անընդհատ փոփոխվող պահանջարկներին համապատասխան՝ անձի մասնագիտական ունակությունների և պատրաստականության մակարդակի բարձրացումը,

բ. անձի՝ տարածաշրջանային և միջազգային մարտահրավերներին դիմակայելու, արագ արձագանքելու և հարմարվելու ունակությունների բարձրացումը,

գ. սոցիալական գործընկերության համակարգի ամրապնդումը և կողմերի զարգացումը,

դ. ինտեգրումը շարունակական կրթության միջազգային հանրությանը և զբաղվածության բնագավառի զարգացումներին:

2. ՇԱՐՈՒՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

2.1 Շարունակական (հարատև) կրթությունը կազմակերպվում է Կենտրոնի կողմից:

2.2 Շարունակական կրթության կազմակերպմամբ անմիջականորեն զբաղվում է Կենտրոնի ղեկավարը, որը վերահսկողություն է իրականացնում դասընթացների կազմակերպման, աշխատանքային կարգապահության նկատմամբ և պատասխանատու է ուսուցման գործընթացի ճիշտ և որակյալ կազմակերպման համար:

2.3 Շարունակական կրթության իրականացման բնագավառում համապատասխան վերապատրաստում անցած դասավանդող անձնակազմը ձևավորվում է Համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամներից կամ հրավիրված մասնագետներից:

2.4 Շարունակական կրթության ապահովման շրջանակներում կազմակերպվող դասընթացների տևողությունը որոշվում է ուսումնական պլաններով:

2.5 Ուսումնական պլանները ամբիոնների կողմից ձևավորվում են ծրագրային վերջնաբոլորների հիման վրա՝ ունկնդիրների պահանջմունքների հաշվառմամբ: Շարունակական կրթության ուսումնական պլանը հաստատվում է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից:

2.6 Դասընթացները կազմակերպվում են վերապատրաստումների, խմբային և անհատական մասնագիտական ուսուցման դասընթացների միջոցով: Դասընթացների տևողությունը, պարբերականությունը որոշվում է ըստ ուսումնական պլանների և ունկնդիրների պահանջմունքների՝ Համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից:

2.7 Շարունակական կրթության կազմակերպման վերաբերյալ գանգվածային լրատվամիջոցներով տրվում է հայտարարություն:

2.8 Ունկնդիրն իր պահանջմունքների, կրթական կարիքների ընտրում և որոշում է համապատասխան դասընթացը:

2.9 Ունկնդիրն ընդգրկվում է դասընթացում իր կողմից ներկայացրած համապատասխան դիմումի հիման վրա:

2.10 Ունկնդրի և Համալսարանի միջև կնքվում է պայմանագիր, որով սահմանվում են կողմերի իրավունքներն ու պարտականությունները, վճարովի ծառայության դիմաց ունկնդրից գանձվող վարձավճարի չափը:

2.11 Դասընթացների ժամանակացույցը համաձայնեցվում է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի հետ և հաստատվում է ռեկտորի հրամանով: Ժամանակացույցը և դասատախտակը տրամադրվում են ունկնդիրներին:

2.12 Շարունակական կրթության իրականացման շրջանակներում բուհում կարող են կազմակերպվել մեկանգամյա բաց դասեր:

3. ՇԱՐՈՒՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄԸ

3.1 Շարունակական կրթության բնագավառում Կենտրոնի կողմից առաջարկվող վճարովի կրթական ծառայությունների տեսակներն են՝

ա. թեմատիկ դասընթաց (առավելագույնը 5 ամիս տևողությամբ),

բ. անհատական և խմբային մասնագիտական դասընթաց,

գ. մասնագետների վերապատրաստումներ:

3.2 Յուրաքանչյուր դասընթացի վարձավճարի չափը և վճարման կարգը սահմանվում է ռեկտորի հրամանով՝ գիտական խորհրդի կամ ռեկտորին կից ֆինանսատնտեսական հանձնաժողովի առաջարկությամբ:

3.3 Կազմակերպությունների (գործատուների) կողմից պատվիրված դասընթացների կազմակերպման դեպքում վարձավճարի չափը որոշվում է կողմերի միջև կնքված պայմանագրի պայմանների հիման վրա ռեկտորի հրամանով՝ գիտական խորհրդի կամ ռեկտորին կից ֆինանսատնտեսական հանձնաժողովի առաջարկությամբ:

3.4 Համալսարանի գիտական խորհրդի որոշման հիման վրա ռեկտորի հրամանով դասընթացի վարձավճարների համար կարող են սահմանվել օրենքով սահմանված զեղչեր:

3.5 Դասավանդող դասախոսի վարձատրման չափը սահմանվում է ռեկտորի հրամանով:

3.6 Դասընթացից հետո ամբողջական ծրագիրը ավարտած ունկնդրին տրվում է վկայական:

4. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՑԹՆԵՐ

4.1 Շարունակական կրթության դասընթացների արդյունքներն ամփոփվում են Կենտրոնի ընթացիկ և տարեկան հաշվետվություններում: